

ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

Ուրբաթ երեկոյ, Յունիս 11ին, տեղի ունեցաւ ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Ամավերջի հանդէսը, երկու ժառանգաւոր եւ մէկ Սարկաւագ շրջանաւարտներով: Յայտագրին մաս կազմեցին խմբերգ, մեներգ, նուագ, արական խումբի հայկական պարեր, ուղերձ եւ տեսչական տեղեկագիր: Վկայականներու քաշխումին հետ նուէրներ ստացան իւրաքանչիւր դասարանի Առաջին եւ Երկրորդ քարտուղին նիշ ապահոված աշակերտները, նաեւ քարի վարուց եւ

պարտիզամշակութեան մէջ օրինակելի աշակերտները:

Հանդէսէն մէկ ժամ առաջ Պատրիարք Սրբազան Հայրը, Միաբանութիւնը եւ հրաւիրեալները առիթ ունեցան վարժարանի փոքր սրահին մէջ վայելելու նկարահանդէսը աշակերտներուն ալլագան նկարներուն, որոնք պատրաստուած էին Տ. Ընծանուէր Աբեղայի ցուցմունքներով: Ի նշան քաջալերանքի մրցանակներ տրուեցան ցուցահանէսին մասնակցող բոլոր նկարիչներուն:

ԱՄՄԱՆԻ ԻԻԶՊԱՇԵԱՆ-ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

Ամմանի Իւզպաշեան-Կիւլպէնկեան Վարժարանի Մանկապարտէզի եւ Նախակրթարանի շրջանաւարտ դասարաններու ամավերջի հանդէսը տեղի ունեցաւ Յունիս 11ին, Ամմանի Ազգ. Մարզական Միութեան ակումբի մէջ, նախագահութեամբ Պատրիարքի Փոխանորդ եւ Վարժարանի վերատեսուչ Տ. Վահան Արք. Թօփալեանի նախագահութեամբ:

Մանկապարտէզի Մաղիկ դասարանի մանուկները իրենց հայկական աշխոյժ երգերով ու պարերով ուրախութեամբ համակեցին ծնողներու եւ հանդիսական-

ներու սրտերը: Իսկ նախակրթարանի շրջանաւարտ աշակերտները ներկայացուցին տպաւորիչ յայտագիր մը հայկական խմբերգներով եւ մեներգներով, եւ արտասանութիւններով, եւ իրենց երախտագիտական զգացումները արտայայտեցին իրենց ծնողներուն, ուսուցիչներուն եւ Տեսչութեան, ուղերձներ կարդալով Հայերէն, Արաբերէն եւ Անգլերէն լեզուներով: Շրջանաւարտները ստացան իրենց նուէրներն ու վկայականները Տեսուչ Սրբազանին ձեռքէն եւ անոր քաջալերական ու գնահատական խօսքերով: